

Կենթադրուի որ այս աստիճան ծանր ամբաստանութիւններ հրատարակողները իրենց շոշափած խնդիրներու մասին ունեցած ըլլաւ յիսկապար ծանօթութիւնը : Բայց իրողութեան մէջ՝ իրենց համար զժողովարար, ինծի համար բարեբաղդարար, այս չորս մարդոց երեքը՝ (Աւետիս Գահանայ, Գրեգոր եւ Մատթէոս) ո՛չ զիս կը ճանչնան, ո՛չ պաշտօնավարութեան ատեն Բաղէշէն, ո՛չ ալ ինծի ծանօթ են, քանի որ առաջինը՝ Թ. Երկրորդը՝ 10. եւ երրորդը՝ 15 տարիներէ ի վեր Բաղէշէն հեռացած Պոլիս կամ Պոլիսի մօտերը կը գտնուին եղբ. (նկատելի է որ ինծի վերագրուած ամբաստանութիւնները 1903-1906 շուրջը միայն կը գտնուին) : Իսկ չորրորդը՝ Տիգրան՝ անկարող լիարժեք, որ միակ արժանաւոր ներկայացուցիչն է մութի մէջ պահուող քանի մը աշխարհական եւ կղերական հակառակորդներու :

Ես երբ կը զիջանիմ բացատրութիւն տալու՝ հարկ կը սեպեմ շեշտելու որ այդ կ'ընեմ ոչ թէ անխելօք եւ անփորձ երիտասարդի մը յերբ-բանքին կարեւորութիւն տալու համար, այլ այն տարրերնակ թեթեւամտութեան համար՝ որով կարգ մը մարդիկ վերջերս հրապարակ նետուած ամէն տեսակ զրոյց եւ յերբ-բանք՝ հալած իւրի պէս կը կ'ընեն, անբարեբանութեամբ կոչուել ալ չենք կարծես սակայն աշխատանք մը սկսելով :

Արդարութեան տարրական զգացումը այս պակասը Ասիական բարբարիկ ըմբռնութիւններու ցայտուն ապացոյց մը սեպել որի փորձուէի, եթէ հաւատացած չ'ըլլայի որ պաղարհամարտող, ուղղամիտ եւ արդարապէս տարրեր զեռ կը գտնուին հայ ժողովուրդի ճակատագրի վարելու կոչուած զատերուն մէջ :

1. Կանքաստանուի իր պատճառ Շողիկեան Սերոյի լիակատարութեան :

Նախորդիս Գեր. Տ. Եղիշէ Մ. Վ. Զրինկի իրենց օրով Պատրիարքարանէն Բաղէշ վերադառնալու նպատակներու բաշխումը կատարուած է Շողիկեան Սերոյի ձեռամբ : Այս բաշխումին շուրջը դարձած ժողովողային շտեպներուն վախճան մը տալու համար՝ դարձեալ նախորդիս օրով հաշուետուութիւն պահանջուած է Շողիկեանէն : Բայց Շողիկեան « փակաստանական հայերու ալ օգնած ըլլալու պատճառով » կամ պատճառանքով՝ խոյս տուած է ամբողջական հաշուետուութենէ մը :

Ա. - Իմ Բաղէշ հասնելէս 8-9 տարի յետոյ, 1904 Փետր. 7ին, - կուսակալ Ֆելիքս Պէյ՝ այդ նպատակներուն ծագումին եւ բաշխումին ընդ որ մասնաբաժնուցիչներն կը պահանջէ Առաջնորդարանէն, Նկատելով որ այդ խնդիրները իմ օրովս եղած չէին՝ սկիզբէն սկսելով վերջ եւ նամատեղեցայ ո՛ր եւ քերական կամ գրաւոր յայտարարութիւն չեմ տալու, ասոր պատճառով թէ Առաջնորդարանի եւ թէ կատարական արձանագրութիւններ :

Բ. - Քաղաքական ժողովը ազգային գիւտանախնդրի վերաբեր զբաւումէ մը ազատելու համար (Մուշի Առաջնորդարանէն պաշտօնավարութեան զբաւումն եւ կորուստն ալ ծանօթ ըլլալով իրեն) սակայն տեղափոխուի օրով եւ զամ այդ հին արձանագրութիւններն քաղաքում մը զրկելու կուսակալին : Շողիկեանի պահանջին վրայ՝ իր խնդրոյն քննութիւնը փոխադրուեցաւ Կարին, ուր յիշեալ քաղաքում անբաւական սեպուելով զՇողիկեան զատարարելու, այդ հին հաշուական խնդիրներու միջոցին պաշտօնավարող Քաղ. ժողովի անդամներէն երկուքը՝ Մաշտոցեանի կարապետ եւ Գասպարեան Մկրտիչ վկայութեան կը կանչուին՝ Կարինոյ զատարանին առջեւ, որուն վրայ Շողիկեան Սերոյի կը զատարարուի հնգամեայ բանտարկութեան :

Գ. - Եթէ ես Շողիկեանի բանտար-

կութեան մէջ ո՛ր եւ է մեղսակցութիւն ունեցած ըլլայի, անխուսափելիօրէն պիտի ենթարկուէի իր ընտանիքին իր կուսակիցներուն, հանուր Բաղէշի ժողովուրդին ու մանաւանդ յեղափոխականներու զայրուելին ու զատնութեանը (եթէ Շողիկեան իրաւունք չեղափոխականներուն օգնած էր) Բայց սկսելով իր բանտարկութեան օրէն մինչեւ Բաղէշէն մեկնելու (իբր երկու տարի ո՛չ միայն ո՛ր եւ է մեղսակցութիւն չը վերագրուեցաւ ինծի, այլ ըստ սովորականին շարունակեցի վայելել իր ազգականներուն յարգանքն ու աջակցութիւնը, չը նայելով որ, ես Բաղէշ ժամանելէս յետոյ, Գոմաց եւ Ամբաստան վանքերուն կալուածներու մատակարարութիւնը Շողիկեանի եւ իր փեսային՝ Միսնիսի Մուշեղի ձեռքէն առնելով՝ մասնաւոր մարմիններու յանձնած էի, եւ ասոր համար իրեն անհաճոյ դարձած :

Դ. - Եթէ ես Շողիկեանի բանտարկութեան պատճառ եղած ըլլայի, իմ ո՛ր եւ է զբաւուր կամ բերանակցի մէկ յայտարարութեան հետք կամ յիշատակութիւնը անպատճառ գտնուելու էր Կարինոյ զատարանի արձանագրութեանց կամ ընդհ. զատարանի ձեւակերպած ամբաստանութեան բանտարկութեան մէջ : (Միջոցին քննող Պատկ. ժողովին կը պահանջեմ այս կարեւոր փաստը ձեռք բերել, ասանց քաղաքակալ խաղաղութեան ծախքէն, զոր կը յօտարիմ հատուցանել ամբողջութեամբ :)

2. Կանքաստանուի իր հեղինակ Սերոյի Շողիկեանի ճշմունքը գողցուած Ներու հազար (2000) ոսկիի :

Այս զրպարտութիւնը չարամիտ ըլլալէ աւելի ապուշ է, զորով ո՛ր եւ է յիշակուել : 1904ին Շողիկեանի ստուէն գողցուածը, լուծածին համեմատ, եօթը հարիւր (700) ոսկի էր :

Ա. - Գողցութեան օրէն մինչեւ իմ Բաղէշէն մեկնելու սեպել իբր երեք տարի :

Այս երկար ժամանակամիջոցին մէջ այդ գողցութեան հեղինակ, պիտակից կամ մասնակից ըլլալու մասին ո՛ր եւ է կատարած կամ չուրեմ մը չ'եղաւ Բաղէշի մէջ :

Բ. Կատարութիւնը հետապնդելով զտաւ զողբը, ստանը Ապտալ անուն ծառան եւ Կամախ զիւրի Եղիշէ Գահանայ, որոնք զտատարութեան վեց ամսեայ բանտարկութեան :

Գ. - Շողիկեանի ինքնազիջումն ամակող մը անմիջապէս յետոյ կը տեղեկացուին Պատրիարքարան, թէ իրենց ստուէն « հազար ոսկի գողցուած է, եւ գողերը եղած են, ստանը ծառան Ապտալ եւ Կամախ զիւրի Եղիշէ Գահանայ » պարտակցութեամբ իր հօրը : Այս նամակը կը պահուի այսօր Պատրիարքարանի մէջ :

Դ. - Շողիկեանի որդին Մուշեղ զբարտարութեանց հրապարակութիւն յետոյ, անձամբ յայտարարած է Տեղապահ Գորբեան Սրբազանի, թէ ես ո՛ր եւ է մասնակցութիւն ունեցած չեմ իրենց զբարտարութեան մէջ : Դուրեւս Սրբազանի ալ այս վկայութիւնը ինծի հաղորդեց անձամբ :

3. Կանքաստանուի իր վեղմար հաշուական գործողութեանց մեջ :

Այս լիարժեք զրպարտութեան դէմ ալ պատասխանս պարզ է, Բաղէշի պաշտօնավարութեան իբր երեք տարիներուն մէջ հովութեան տակ գտնուող Գոմաց, Ամբաստան եւ Միջոցական տարիներուն ինչպէս նաեւ Առաջնորդարանի հաշուական ընդ որ գործողութիւնները, օրը օրին արձանագրուած, քաղաքական ժողովի կողմէն պարբերաբար քննուած, եւ ճշտութիւնը ստորագրուած է : Մեկնելէս օր մը առաջ վերջին հաշուետուութիւնն ըրած եւ պատրաստի գրամներն ալ յանձնած եմ Առաջնորդարանի ընդհանուր գահապետ Գրգորեան ծէրծիկ Եփենդի, ի ներկայութեան Գա-

ղաք. ժողովին, ինչպէս կը հաստատան Առաջնորդարանի գիւտանական արձանագրութիւններ, որոնց հարազատ պատճեններն ալ ունիմ ի ձեռքի :

Երկու Գահանայացուները ընդունած եթէ հարիւր զրուշի գումարս ալ, որուն վրայ եւս խօսուեցաւ վերջերս, փոխանակ տեղ տեղ տիրող սովորութեան համեմատ իւրացնելու, անբողոքով յանձնած եմ Առաջնորդարանի անտուկին, եւ այս յանձնումները օրը օրին արձանագրուած են պաշտօնական տօմարներու մէջ :

Ե. - Կանքաստանուի իր քարոյսազուրկ : Սրժանիքէս չափ աւելի բարձր պատիւներով Եպիսկոպոսանալու համար Բաղէշէն բաժնուեցայ հարիւրուստներու խանդավառ յուզարկու հաղթանակութեամբ մը :

Ո՛րն է այն համայնքը զոր սիրտ պիտի ընէր « բարոյագրուի » կեղեցական մը սողողը աչքան պատիւներով եւ Եպիսկոպոսանալու յետոյ վերադարձի հաւատարմի ուղի իրմէ : Գահանայներու մէջ մանաւանդ քարոյսական խնդիրներու մասին, ո՛րքան խոտապահանջ են՝ հաղիւ թէ զաղափար ունին վտարուածին մեր հայ եղբայրները :

Իսկ թէ Բաղէշէն միջեւ Տրապիզոն, Կէ օրուան ճամբորդութեան մէջ, իբր թէ հետ ալ կին մը եղած ըլլայ, ծիծաղելի է եւ սառսպիտական : Եթէ իրաւ ըլլար, կատարական կին մը ըլլալու էր այն արգարեւ, որ յաջողի է ամէն իջեւանի մէջ զիս այցելող բաղամութեան հետաքրքիր աչքերէն ծածկել իր անձը :

Այս սղայական յերբ-բանքին պղծատրուելու չար միամիտ գտնուող անձներուն անգործութեան համար, խոստովանելու եմ սակայն, որ այդ երկար ճամբուն մէջ ունէի ընկեր մը՝ միակ ճամբորդակիցս, տարիքը՝ 55 տարեկան, անունը՝ Միւրիթար :

Ե. - Կանքաստանուի վերջապետ իր հեղինակ կամ պատճառ Սասնոյ հազար ինը հարիւր չորս (1904) ի ջարդին :

Ա. - Այդ օրէն մինչեւ ամբաստանութեան հրապարակ նետուած օրը սահեցան անցան չորս տարի եւ չորս ամիս, ու այս երկար ժամանակամիջոցին մէջ ոչ մէկուրեւ միայն չ'անցաւ արտասանման մէջ ազատ համարձակ հրատարակուող հայ թերթի մը միջոցաւ զէթ վերագրել ինծի այդպիսի զոխային արարք մը, եւ ո՛չ իսկ շուկ մը :

Բ. - Հայաստանի մէջ վստացող յեղափոխական անարեւելիներ, որոնք փոքրիկ զեղծուներ ու անկարգութիւններ մահով կը պատժէին, կո՛յր էին միթէ որ Սասնոյ մէջ իրենց քաջարի ընկերներուն եւ հարիւրաւոր Սասնոցիներու ջարդին « հեղինակն ու մասնակիցը » անպատիւ թողուցին :

Գ. - Բաղէշի հայ ժողովուրդը ի վարձատրութիւն այդ « քաջագործութեան » միթէ ջարդին յետոյ շարունակեց ո՛չ միայն պահել զիս պաշտօնիս վրայ, այլ բազմաթիւ պաշտօնական նամակներով Պատրիարքարանէն եւ Վեհ. Հայրապետէն ստիպողաբար խնդրեց Եպիսկոպոսանալու :

Դ. - Պոլսոյ Կոնստանտինոպոլիսի ժողովները, որոնց ծանօթ էին Սասնոյ վերջին ջարդին ամբողջ փութերը արդեօք այդ աղետէն հաճո՞յք կ'զգային որ անոր « հեղինակն ու մասնակից » վարդապետին՝ ջարդին յետոյ գրեթէ ճնշողական հրաւեր կարգուցին, Բաղէշի իր թեմին միացնել նաեւ Մշոյ թեմը ժամանակի մը համար :

Ե. - Եթէ ազգապետ մ'էի ու հին ոչ-թիւրի տակ զիս պատժելու չէին համարձակէր, ի՛նչ բան կ'ստիպէր Ազգ. կեդր. ժողովը ջարդին երեք շաբթի չորս անկա յետոյ, երբ Կ. Պոլիս կը գտնուէի, առաջարկել ինծի կամ Բաղէշ վերադառնալ եւ կամ իբր այցելու հովիւ երթալ ի Պուլկարիս, եւ անցա-

զրի զօրուարութեան վրայ՝ յանձնել ինծի քարոյսութեան պաշտօններ ի Կ. Պոլիս :

Զ. Եթէ ազգապետ մը եղած ըլլայի՝ իրարեք եւ ի Բաղէշ պաշտօնավարութեան միջոցին՝ Պր. Ռ. Զարգարեանի եւ Պր. Գ. Ս. Մարգարեանի ի պէս յայտնի յեղափոխականներին՝ չ'ու մտերմական յարաբերութիւններ կը մշակէին հետս, եւ ի՛նչպէս կրնայի ծանօթ յեղափոխական գործիչ մը ազատել մտաւարտ վտանգէ մը (վկայ Պր. Ռ. Զարգարեան) եւ ի՛նչպէս կրնայի անձնական քակելու նպատ մը հասցունել յեղափոխական խումբի մը (վկայ Պր. Գ. Մարգարեանի) եւ ի՛նչպէս կրնայի Բաղէշ եւ Հաւաքի գիւղի ազգապետ Գալմազաւ Արտազ Իզդէթի ծրագրած կոտորածէն (վկայ ի միջի այլոց Տէր Սուրէն քահանայ Տէրոյեան, Մըկրտիչ Էֆ. Մուշեղեան եւ ժամանակին Պատրիարքարան ուղղած տեղեկագիրս) :

Սասնոյ ջարդին հարցը ապահովաբար խեղափոխուած պիտի ըլլայ հետեւեայ պարագայէն :

Հազար ինը հարիւր չորս (1904) ի Փետրուարէն սկսելով (տե՛ս, Հրայրի Փետր. 27 թուակիր տարեալալից նամակը 1904 ի «Դրօշակ»-ին Ապրիլ - Մայիս թիւին մէջ) զինուորական տեղադրութեան վերջին մը կը տրեք զէպ ի Սասնոյ առաջնորդող ճամբորդներուն վերայ : Թեթեւութեանը սեղափոխութեանը ակնհայտ փոխանակութեանը վկայութիւնը խուճապի մատնած էր զաշտին հայ բնակչութիւնը : Գուրգ եւ թուրք փոքրիկ ցոյցերու հետեւեայքով Մուշի շուկաները գողցուած էին 2-3 օր, Վեհ. քահանայ կոտորածի մը սարսափը արեւը կը ստեղծէր մեր երակներուն մէջ :

Ապրիլ 3ին ինծի հասաւ Պատրիարքական հեռագիր մը՝ եւ Բաղէշի կուսակալին միջոցաւ Կայսերական իրաւեք մը, որով կը հրամայուէր՝ Բաղէշի Կատարի ժողովին անդամներին Գէնտիլեան Յակոբ եւ Կոնստանտին Մաշեղ աղաներուն հետ Մուշ երթալ, խորհրդակցելու տեղեւոյն առաջնորդական Տեղապահ Գեր. Տ. Գնէլ Մ. Վ. վարդապետի հետ : Տ. Գնէլ Մ. Վ. ի ալ միաժամանակ Կայսերական իրաւեք եւ Պատրիարքական հեռագիր ուղղուած էր. եւ իրեն խորհրդական նշանակուած Մուշի Քաղ. ժողովոյ վեց անդամները (Յովհաննէս Սեդրուհի, Կարապետ Բաղեան, Պողոս Մովսէսեան, Մարտիրոս Սահակեան, Նազարեթ Բեշիշեան եւ Գառապար Զօլթիկեան Էֆ. ներս) : Սկիզբէն մինչեւ վերջ ամէնքս, թուով տասը (10) հոգի կատարեալ համամտութեամբ խորհրդակցեցանք եւ շարմեցանք, միշտ ի մեծ զգոտութեան Բաղէշի կուսակալին եւ իր խորհրդակից պաշտօնականներուն :

Մենք հայերս անմիջապէս տեսանք լարուած թակարգը կուսակալը՝ քաղցրէն սկսելով մինչեւ խիստ եւ անարգական՝ ամեն միջոց ի գործ դրաւ որ կարգ մը թիւրք պաշտօնականներէ յետոյ մենք ալ ստորագրեցինք իր ձեռքով պատրաստած մէկ յայտագիրը, որուն համեմատ Սասնոյ ապաստանող խումբ մը քաջ հայեր «էքքըս» եւ հետեւապէս ապաստանալու կը հռչակուէին :

Այս զերպարտ ճգնաժամին մէջ Տիրջը անհասանելի դօրութեամբ՝ ամենէն առաջ ոտքի ելնելով՝ ես համարձակութեամբ մեծեցի ստուարն այդ սեւակ գրութիւնը :

Իմ ինը (9) ընկերներս, սկսելով Տ. Գնէլ Մ. վարդապետէն, ամենքս ալ հետեւեցան օրինակիս, (տե՛ս Գրօշակի 1904 Ապրիլ-Մայիս թիւ, էջ 51 եւ 54) ու երբ նախապէս Մուշի Առաջնորդարանի քաղաքապետ, այժմ Օսմ. Երեսփոխան Գեղամ Էֆենդիին լսած ըլլալով՝ յայտարարեց թէ Սասնոյ ապաստանողները հետի «էքքըս» ըլլալէ պարկեշտ հայեր էին ու լուծածին համեմատ իրենց որոշ բողոքներն ու ար-

